

իրաւունքիւ և առհասարակ հալոց օրէնսդրութեան իւր ուսումնասիրութիւնը, որով մասամբ իրադործած լինելով արժանալիչատակ իրաւագէտ Հ. Վահան Վ. Բաստամեանի նոյն ուսումնասիրութեան մասին ընդհանրապէս վաղուց արտայայտած իղձը ևս՝ կարող է ծառայութիւն մատուցած լինել ապագայում մեր աղջակին գրականութեան իրաւաբանական տակաւին աղքատիկ ճիւղին: Եւ այս մի դժուար բան չը պիտի լինի պ. Բաստամեանի համար, քանի որ ինքը՝ ինչպէս տեսանք, ցանկութիւն ունենալով ուսումնասիրել լիչեալ ճիւղը՝ բնակուած է մանաւանդ Փարիզի նման համալսարնակին գիտնական մի կենտրոնում, ուր միշտ առիթ և նոյն առարկային վերաբերեալ նիւթի առատութիւն կարող է ունենալ:

Վերջացնելով այս երկտողս պ. Բաստամեանի «Հալկական իրաւունք» գրքովի մասին՝ չը մոռանամ ասել միայն, որ հալոց իրաւաբանական աղբիւրներ մշակելիս՝ եւրոպական գիտնականների ուսումնասիրութեանց, քննադատութեանց և հալեացքների հետ միասին զուգահեռաբար, պէտք է աչքի առջև ունենալ անպատճառ նոյնպէս և ամբողջ հալ գրականութեան մէջ երեցած թէ՛ ձեռագիր և թէ՛ առաւելապէս տպուած արձ հին ու նոր գրութիւնները, լօղուածները, գրքովիները և այլն, որ անմիջական վերաբերութիւն կարող են ունենալ առաջադրեալ ուսումնասիրելու առարկային և որոնցից կ'օգտուի անշուշտ ուշիմ ուսումնասիրողը:

Ն. ՅԱՐՈՅ

Մինաս Բերքերեան. «Սմբատ Շահ-Ազիզ» (էտիւդ) նուէր պ. Ս. Շ.-Ա.-ի 35 ամեայ յօրելեանին. էջ 35:

Երիտասարդ քննադատ բանասէր պ. Մ. Բերքերեանը, որ մի ժամանակ եռանդով գործում էր սբ. Էջմիածնի ճեմարանում և Տփլիսում (կարճ միջոց), բարեբաղդաբար ուրիշ շատերի պէս՝ չանլալտացաւ հալ գրական ասպարէզից և երբեմն-երբեմն հանդէս է գալիս մեր պարբերական մամուլի և գրական ժողովածոների մէջ՝ իւր գրական ակնարկներով, նոյնպէս և լուրջ քննադատական ուսումնասիրութիւններով:

«Սմբատ Շահ-Ազիզ» ուսումնասիրութիւնը մի փոքրիկ

ամփոփ աշխատութիւն է, ուր հեղինակը Շահ-Աղիդի համառօտ կենսագրութեան հետ բնորոշում է նաև նրա գրական-բանաստեղծական գործունէութիւնը: Խօսում է «Ազատութեան ժամերի», 1865 թ. հրատարակուած բանաստեղծութիւնների և զլխաւորապէս «Լևոնի վիշտը» պօէմայի մասին: Իշխատակում է նաև «Հրապարակախօս ձայնը», «Ամառնային նամակները» և եղրակացնում է, որ Շահ-Աղիդը բացառապէս քնարերգակ բանաստեղծ և հռետոր է: «Նա բանաստեղծի կոչումը ալն բանի մէջ է տեսնում, որ իր քնարը գործ դնէ հասարակութեանը ծառայելու համար»: Այսպիսի մի բնորոշում թէև հիմնուած լինի նոյն իսկ բանաստեղծի սեպհական խօսքերի վրայ, այնուամենայնիւ ճիշդ չպէտք է համարուի: Իսկական տաղանդ-բանաստեղծն արտադրում է ինքնաբերաբար և ազատ է տենդենցիայից: Նա, առանց բռնութիւն գործ դնելու իւր հոգեկան զգացմունքների վրայ, չի կարող իւր գրիչը միշտ մի որոշ ուղղութեամբ շարժել և ճնշել իւր անհատական ներշնչումները: Բանաստեղծի վառ երևակայութեան թռիչքը չպէտք է սահմանափակուի այս կամ այն դիտաւորեալ նպատակով, այլ ամեն մի հոգեկան երևութ, լինի այդ հասարակական, ազգային, ընդհանուր մարդկային կամ զուտ անհատական—անձնական, որ տղաւորութիւն է թողնում բանաստեղծի զգայուն սրտի վրայ, ոգևորում է նրան, պէտք է ազատ դուրս բղխէ նրա մտքերի հոսանքից: Ուստի և Շահ-Աղիդի խօսքերը «նախ և առաջ քաղաքացի և ապա բանաստեղծ», չի կարող իսկական տաղանդ-բանաստեղծի համար նշանաբան լինել: Ուրիշ բան է հարկաւ, եթէ ասէինք, թէ բանաստեղծը կարող է լինել և լաւ քաղաքացի, ընտիր հայրենասէր, մեծանուն հասարակական գործիչ և այլն:

Հեղինակը ցոյց տալով Լօրդ Բալլըրնի, Հայնէի, Պուշկինի և Լերմօնտովի աղղեցութիւնը Շահ-Աղիդի ստեղծագործութիւնների վրայ, դառնում է «Լևոնի վշտին» և գեղեցիկ շաբահիստութեամբ վերլուծութեան ենթարկելով՝ քննութեան առարկայ է դարձնում չիր ժամանակի առաջին և մինչև այժմ միակ հայկական պօէման՝ այդ բառի եւրոպական իմաստով: Միջանկեալ կերպով բնորոշում է նոյնպէս «Հիւսիսափայլի», Ստեփաննոս Նազարեանի և Միքայէլ Նալբանդեանի աղղեցութիւնը երիտասարդ Շահ-Աղիդի սրտի և մտքի ուղղութեան վրայ:

Բերբերեանը լաջող կերպով պաշտպանում է «Լեոնին» ալն քննադատների առարկութեանց դէմ, որոնք հերոսից գործ են պահանջում, իսկ նա միայն խօսում է. «Իրականութեանը հաւատարիմ մնալ ցանկացող հեղինակը պարտական էր վերցնել հէնց աշնայիս մի անձնաւորութիւն, որ Լեոնի նման ցաւում է ազգային ցաւերով, տեսնում է նրա թշուառութիւնը, քաջութիւն ունի բաց ճակատով խաւարի քարեկամների դէմ դուրս գալ, լուսաւորութեան կարեւորութիւնը քարոզել և գործունէութեան լալն ծրագիրներ կազմել, բալց ինքը—լի գործում, Կան շրջաններ, երբ գործը կարծես ամփոփւում է խօսքի մէջ. Լեոնն ալդ շրջանի մարդն էր»:

Խորհուրդ ենք տալիս ընթերցողներին կարդալ Բերբերեանի ալս փոքրիկ, բալց դեղեցիկ և դրական պարզ ոճով գրուած ուսումնասիրութիւնը:

ՌՐԻԶ

Հանդէս Հայագիտութեան. Zeitschrift für armenische Philologie. Unter Mitwirkung von Abgar Joannisian, herausgegeben von Franz Nikolaus Finck, als verantwortlichem Redacteur, Eznik Gjandschian und Agop Manandian. Erster Band, erstes Heft. Marburg 1901 էջ 96. Միեւնոյնը Erster Band, zweites Heft. 1902. էջ 97—176.

Վաղուց է արդէն, որ եւրոպացի լեզուաբան գիտնականները ուշադրութիւն են դարձրել մեր հին լեզուի, գրաբարի վրայ և բաղմաթիւ աշխատութիւններ լոյս ընծայել ալդ նիւթի մասին, որոնց մեծ մասը ցրուած է եւրոպական—գերմանական, ֆրանսիական, անգղիական և ալլն—մասնագիտական պարբերական թերթերի մէջ. Յարգելի ուսուցչապետ Ֆ. Ն. Ֆինկը, որ մի քանի տարի է իւր քրոջ, օր. Ֆինկի հետ, սք. Էջմիածնում և Թիֆլիզում ապրելով՝ հալոց լեզուն և գրականութիւնն է ուսումնասիրում, մի շատ օգտակար միտք է լղացել՝ հրատարակել մի մասնագիտական պարբերական թերթ հայագիտութեան մասին: Այսուհետեւ հայագէտ գիտնականների հետազոտութիւնները ցրուած չեն լինի այս ու ալլն